ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N25/07/01

ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Ք. Երևան ***«29» հուլիս 2025թ.***

ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Լ.Ալեքսանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Գլխավոր տնօրեն Ա.Խլոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը, հիմք ընդունելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար՝ Լ.Ալեքսանյանի 28.07.2025թ N 2-06/304-25 գրությունը, պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի ք., Սայաթ-Նովա փողոց 3/8 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկից 51.7 քառ. մ մակերեսով տարածքի ամսական վարձավճարի շուկայական արժեքի գնահատում՝ վարձակալությամբ տրամադրելու նպատակով, այսուհետ «Ծառայություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ աշխատանքի համար:

1.2 Աշխատանքների կատարման ժամկետն է սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 2025թ. օգոստոսի 19-ը: Կատարողը կարող է աշխատանքը կատարել ժամկետից շուտ:

1.3 Ծառայությունը մատուցված է համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից վճարովի ծառայության մատուցման հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով.

2.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետում.

2.1.3 Ծառայությունը (գնահատումը) իրականացնել առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ գնահատման մասին ստանդարտով և այլ նորմատիվ իրավական ակտերով.

2.1.4 Անձամբ կատարել Ծառայությունը:

2.2 Կատարողը իրավունք ունի՝

2.2.1 Պահանջել Պատվիրատուից գնահատվող գույքի վերաբերյալ անհրաժեշտ (լրացուցիչ) փաստաթղթեր.
2.2.2 Ցանկացած ժամանակ հրաժարվել Ծառայությունը կատարելուց, եթե Պատվիրատուն չի կատարում 2.3.1 կետի պահանջները:

2.3 Պատվիրատուն պարտավոր է

2.3.1 Ապահովել գնահատվող գույքի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության տրամադրումը Կատարողին.
2.3.2 Կատարած Ծառայության դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը ստանալու պահից 5 օրվա ընթացքում:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի

2.4.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.
2.4.2 Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի 10%-ի չափով տուգանք:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1 Սույն պայմանագրով կատարված Ծառայության համար Պատվիրատուն Կատարողին վճարելու է 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ԱԱՀ-ն.
3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝պայմանագրի արժեքի 5%-ի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.15%-ի չափով.
4.2 Սույն պայմանագրի 2.3.2 կետում նշված ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 5%-ի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.15%-ի չափով.
4.3 Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով /ՖՈՐՍ- ՄԱԺՈՐ/, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից: Սույն պայմանագրի հավելվածը դրա անբաժան մասն է.

7.2 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2(երկու) օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	*ԿԱՏԱՐՈՂ*
ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայություն	**«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ**
Հասցե՝ ք. Երևան, Ա.Արմենակյան	*Հասցե՝ ք.Երևան Զաքիյան 10*
ՀՎՀՀ 00476409	*ՀՎՀՀ 02562123*
ՀՀ ՖՆ թիվ 1 ՏԳԲ	*ՀՀ ՖՆ Երևանի թիվ 1 ՏԳԲ*
Հ/Հ 900011023265	*Հ/Հ 900018002981*
Գլխավոր քարտուղար	*Գլխավոր տնօրեն*
Լ.Ալեքսանյան	*Ա.Խլոյան*
Կ.Տ	*Կ.Տ*

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱԿՏ

Ք. Երևան **04.08.2025 թ.**

Սույն Ակտով 29.07.25թ. կնքված «Վճարովի ծառայությունների մատուցման» թիվ 25/07/01 պայմանագրի կողմերը՝ ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայությունը և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, հավաստում են, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ և ընդունվել Պատվիրատուի կողմից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները, ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայություն

Հասցե՝ ք. Երևան, Ա.Արմենակյան

ՀՎՀՀ 00476409

ՀՀ ՖՆ թիվ 1 ՏԳԲ

Հ/Հ 900011023265

Գլխավոր քարտուղար

Լ.Ալեքսանյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ Ք.Երևան Զաքիյան 10

ՀՎՀՀ 02562123

ՀՀ ՖՆ Երևանի թիվ 1 ՏԳԲ

Հ/Հ 900018002981

Գլխավոր տնօրեն

Ա.Խլոյան

Կ.Տ